

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հերացի» արհեստակցական կազմակերպության նախագահի, գործադիր կոմիտեի և վերստուգիչ մարմնի անդամների ընտրությունների մասին

Սույնով «Հերացի» արհեստակցական կազմակերպության անդամները տեղեկացվում են, որ 2024 թվականի հունիսի 6-ին լրանում են «Հերացի» արհեստակցական կազմակերպության նախագահի, գործադիր կոմիտեի և վերստուգիչ մարմնի անդամների պաշտոնավարման՝ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված ժամկետները:

«Հերացի» արհեստակցական կազմակերպության նոր նախագահի, գործադիր կոմիտեի և վերստուգիչ մարմնի անդամների ընտրությունը սահմանված կարգով կազմակերպելու նպատակով, կազմակերպության անդամները, կազմակերպության կանոնադրության 10-րդ գլխի համաձայն կարող են ինքնառաջադրվել, ընդ որում նախագահի թեկնածուները ինքնառաջադրվում են սույն հայտարարության հրապարակումից հետո մեկշաբաթյա ժամկետում, իսկ գործադիր կոմիտեի և վերստուգիչ մարմնի անդամների թեկնածուները՝ երկշաբաթյա ժամկետում՝ ներկայացնելով գրավոր դիմում:

Գրավոր կարգով ինքնառաջադրվելու դեպքում դիմումը ներկայացվում է կազմակերպության անունով: Դիմումի մեջ նշում են կազմակերպության նախագահի կամ գործադիր կոմիտեի կամ վերստուգիչ մարմնի անդամ ընտրվելու ցանկության մասին, ապա և նշվում են դիմում ներկայացնելու օրը, ամիսը, տարին, դիմողի անուն, ազգանունը, ստորագրությունը: Դիմումը պետք է ներկայացնել՝

- 1) Կազմակերպության հասցեով կամ էլեկտրոնային փոստով՝ նախագահի թեկնածու առաջադրվելու դեպքում.
- 2) Կազմակերպության գրասենյակ կամ էլեկտրոնային փոստով՝ գործադիր կոմիտեի կամ վերստուգիչ մարմնի անդամի թեկնածու առաջադրվելու դեպքում.

Կազմակերպության էլեկտրոնային փոստի հասցեն է heratsitradeunion@gmail.com

Միևնույն ժամանակ տեղեկացվում է, որ կանոնադրությունը հնարավորություն է տալիս կազմակերպության անդամներին ինքնառաջադրվել Համաժողովի ընթացքում, որը նախատեսում է անցկացնել 2024 թվականի մայիսի 31-ին ժամը 15:00-ին Համալսարանի Էմիլ Գաբրիելյանի անվան 4-րդ լսարանում:

ՆԱԽԱԳԱՀԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա.ՀԱՅՐՅԱՆ